ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/295

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 08.10.2021թ. թիվ 26/26-1/16436-2021 գրությամբ «Յու Թի Էս Բրոք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չուեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 01.10.2021թ. թիվ Ե/40/2610-21 գրության հիման վրա, 08.10.2021թ. թիվ 26/26-1/16436-2021 գրությամբ նախաձեռնել է «Յու Թի Էս Բրոք» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Յու Թի Էս Բրոք» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Յու Թի Էս Բրոք» ՍՊԸ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Յու Թի Էս Բրոք» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/295 ընթացակարգի շրջանակներում 01.11.2021թ. ժամը 10:05-ին և 05.11.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 01.10.2021թ. թիվ Ե/40/2610-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար մաքսային միջնորդի՝ բրոկերի ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-44/21» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստում արձանագրվել է, որ «Յու Թի Էս Բրոք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է եղել անհամապատասխանություն: ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի նիստը կասեցվել է և նույն օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային գնումների armeps համակարգի, ինչպես նաև էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել է նրան առկա անհամապատասխանության վերաբերյալ՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել այն: Սահմանված ժամկետում «Յու Թի Էս Բրոք» ՍՊԸ-ի կողմից շտկում չի կատարվել, որի հետևանքով նրա հայտը գնահատվել է հրավերի պահանջներին ոչ համապատասխան՝ անբավարար և մերժվել է՝ Կարգի 42-րդ կետի համաձայն:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի ա) պարբերության և Կարգի 45-րդ կետի պահանջներով, Ձեզ ենք ներկայացնում մասնակցի տվյալները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/295 ընթացակարգի շրջանակներում 01.11.2021թ. ժամը 10:05-ին և 05.11.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/295 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/295 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից կազմակերպվել է «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-44/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Յու Թի Էս Բրոք» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.09.2020թ.-28.09.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Յու Թի Էս Բրոք» ՍՊԸ-ի Հավելված 1-ը (դիմում հայտարարություն) չէր համապատասխանում հրավերով սահմանված Հավելված 1-ին և որոշվել է Կարգի 41-րդ կետի համաձայն՝ կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել Ընկերությանը՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 25.09.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ հայտնելով, որ «Յու Թի Էս Բրոք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1-ը (դիմում հայտարարություն) չի համապատասխանում հրավերով սահմանված Հավելված 1-ին: Անհրաժեշտ է շտկել և ներկայացնել հրավերով սահմանված պահանջներով:

4. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ «Յու Թի Էս Բրոք» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել համապատասխան շտկումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 08.10.2021թ. թիվ 26/26-1/16436-2021 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 01.10.2021թ. թիվ Ε/40/2610-21 գրությունը և կից փաստաթղթերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի ա) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում...:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին...:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: ***<u>Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:</u>***

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից կազմակերպվել է «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-44/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Յու Թի Էս Բրոք» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.09.2020թ.-28.09.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Յու Թի Էս Բրոք» ՍՊԸ-ի Հավելված 1-ը (դիմում հայտարարություն) չէր համապատասխանում հրավերով սահմանված Հավելված 1-ին և որոշվել է Կարգի 41-րդ կետի համաձայն՝ կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել Ընկերությանը՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 25.09.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ հայտնելով, որ «Յու Թի Էս Բրոք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1-ը (դիմում հայտարարություն) չի համապատասխանում հրավերով սահմանված Հավելված 1-ին: Անհրաժեշտ է շտկել և ներկայացնել հրավերով սահմանված պահանջներով:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ «Յու Թի Էս Բրոք» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել համապատասխան շտկումը:

Այսպիսով՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետով սահմանվում է, որ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է:

Ընդ որում՝ համապատասխան կարգավորումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն

իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետով սահմանվում է՝ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում <u>արձանագրվում են անհամապատասխանություններ</u>՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: <u>Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:</u>***

Ընդ որում՝ Կարգի 43-րդ կետով սահմանվում է, որ հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի ***<u>արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը</u>***:

Վերոգրյալ իրավանորմերի մեկնաբանության և սույն գործի փաստական հանգամանքների համադրված վերլուծության արդյունքում արձանագրում եմ, որ հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարի համար սահմանված է Մասնակցին ուղարկվող ծանուցման և հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության մեջ արձանագրված անհամապատասխանությունները մանրամասն նկարագրելու պարտականություն, մինչդեռ արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 41-րդ և 43-րդ կետերով սահմանված իմպերատիվ դրույթները, այն է՝ հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում Ընկերության կողմից ներկայացված Հավելված 1-ում՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությունում, արձանագրելով անհամապատասխանություն, հանձնաժողովի նիստի արձանագրության և Ընկերությանն ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն չի նկարագրվել հայտնաբերված անհամապատասխանությունը:

Այսպիսով՝ գտնում եմ, որ Կարգի խախտմամբ իրականացված գործողությունների արդյունքում առաջացած բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության, հետևաբար հնարավոր չէ արձանագրել «Յու Թի Էս Բրոք» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, ուստի գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 08.10.2021թ. թիվ 26/26-1/16436-2021 գրությամբ «Յու Թի Էս Բրոք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**